

900 325151117
0470 8275

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՏԱՐԱԾՔԻ ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Էջմիածին
Երկու հազար քսանմեկ թվականի նոյեմբերի քսանհինգ 25/11/2021

Էջմիածնի քաղաքային համայնքը, հասցեն ք.Էջմիածին Մ.Մաշտոցի 0, այսուհետ՝ Վարձատու, ի դեմս համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանի, հասցե՝ քաղաք Էջմիածին, Կամո 35, անձնագիր՝ BA1938367 տրված 13.05.2015թ. 001-ից, որը գործում է համաձայն ,Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի, մի կողմից, որի անունից համաձայն 09.11.2021թ.-ին տրված թիվ 5237 լիազորագրի հանդես է գալիս Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար ԱՐԵՎԻԿ ԱՐԱՄԻ ԱԶԱՍՈՂԱՅԱՆԸ, ծնված՝ 26/10/1986թ.-ին, ՀՕՀ՝ 7610860581, անձնագիր՝ 005711197, տրված՝ 057-ի կողմից, 09/11/2017թ.-ին, հաշվառված՝ ԱՐՄԱՎԻՐ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՉԱՐԵՆՑԻ Փ., 376 Տ, և Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ" պետական մարմնի, հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, Վ.ՍԱՐԳՍՅԱՆ Փ., 3/8, 0010, գրանցման համար՝ 286.184.1045366, ՀՎՀՀ՝ 02506264, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունների ժամանակավոր պաշտոնակատար՝ ԶԱՌԱ ՌԱՖԻԿԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ, ծնված՝ 28/10/1970թ.-ին, ՀՕՀ՝ 7810700162, նույնականացման քարտ՝ 008418675, տրված՝ 004-ի կողմից, 24/06/2016թ.-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ՍՈՍԵԻ Փ., 2/2 Շ, 8ԲՆ, որի անունից համաձայն 17/11/2021թ. /Երկու հազար քսանմեկ թվականի նոյեմբերի տասնյոթին/ տրված թիվ Ե 238 լիազորագրի հանդես է գալիս ՀՀ Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Արմավիրի մարզային մարմնի պետ՝ ԿԱՐԵՆ ՀԱՎՈՐԻ ԹՈՐՈՍՅԱՆԸ, ծնված՝ 15/11/1986թ.-ին, ՀՕՀ՝ 2511860457, նույնականացման քարտ՝ 006109409, տրված՝ 057-ի կողմից, 05/11/2017թ.-ին, հաշվառված՝ ԱՐՄԱՎԻՐ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՉԱՐԵՆՑԻ Փ., 15 Շ, 5ԲՆ, այսուհետ՝ Վարձակալ, Էջմիածին համայնքի ավագանու 29.10.2021թ. /Երկու հազար քսանմեկ թվականի հոկտեմբերի քսանինին/ թիվ 128 և Էջմիածին համայնքի ղեկավարի 08.11.2021թ. /Երկու հազար քսանմեկ թվականի նոյեմբերի ութի/ թիվ 1463 որոշումների հիման վրա կնքեցին սույն վարձակալության պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող մարդ Արմավիր, համայնք Վաղարշապատ ք. Մ. Մաշտոցի փողոց 0 վարչական շենք հասցեի 2-րդ մասնաշենքի 4-րդ հարկում գտնվող II.4/07 /չորս/գրո յոթ/ /16,8 /տասնվեց ամբողջ ութ տասնորդական/ քմ ընդհանուր մակերեսով/, II.4/06 /չորս/գրո վեց/ /16,8 /տասնվեց ամբողջ ութ տասնորդական/ քմ ընդհանուր մակերեսով/ և II.4/16 /չորս/տասնվեց/ /12 /տասներկու/ քմ ընդհանուր մակերեսով/ համարակալումներով ընդհանուրը 45,6 /քառասունհինգ ամբողջ վեց տասնորդական/ քմ ընդհանուր մակերեսով ոչ բնակելի տարածքները, համաձայն հատակագծի, որը կցվում է սույն պայմանագրին և հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մասը, այսուհետ անշարժ գույք, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Արմավիրի մարզային մարմնի կողմից գործունեություն ծավալելու նպատակով:

1.2. Գույքը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին, համաձայն 19.03.2019թ.-ին /Երկու հազար տասնինը թվականի մարտի տասնինին/ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից տրված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների գրանցման թիվ N19032019-04-0054 վկայականի:

1.3. Սույն պայմանագիրը կնքվում պահին վարձակալության հանձնված անշարժ գույքը գրավ դրված չէ. արգելանքի տակ չի գտնվում համաձայն թիվ ՄՏ-05112021-04-0518 միասնական տեղեկանքի, տրված 05.11.2021թ. /Երկու հազար քսանմեկ թվականի նոյեմբերի հինգին/ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի կողմից կողմից:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Վարձատուն պարտավոր է՝

2.1.1. վարձակալական պայմանագրի ժամկետը լրանալուց հետո 1/մեկ/ օրվա ընթացքում համապատասխան ակտով ընդունել վարձակալված գույքն այն վիճակով, ինչ վիճակով հանձնել է վարձակալին:

2.1.2. վարձակալին նախօրոք տեղեկացնել վարձակալված գույքն այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց սեփականությանը անցնելու, ինչպես նաև տարածքի իրավունքի նկատմամբ վեճ լինելու մասին:

2.1.3. չխոչնդոտել վարձակալին վարձակալված տարածքում սույն պայմանագրով սահմանված գործունեություն իրականացնելիս, ինչպես նաև չմիջամտել նրա սույն պայմանագրով նախատեսված գործունեությանը:

2.2. Վարձակալը պարտավոր է՝

2.2.1. ժամանակին վարձատուին վճարել վարձակալված գույքի համար վարձավճարը սույն պայմանագրով նշված չափերով:

2.2.2. ժամանակին վճարել իր կողմից օգտագործված էլեկտրական էներգիայի վարձը, ջրի, կոմունալ ծառայությունների վարձը:

2.2.3. սույն պայմանագրի ժամկետը լրանալու օրվանից սկսած 1 օրվա ժամկետում համապատասխան ակտով տարածքը և գույքը հանձնել վարձատուին այն վիճակով ինչ վիճակով ընդունել է դրանք, վերացնելով պատճառված վնասը կամ փոխհատուցել վնասը շուկայական գներով:

2.2.4. առանց Վարձատուի գրավոր համաձայնության տարածքում չկատարել փակ և բաց լարանցումներ և չանցկացնել հաղորդակցության ուղիներ, չանել վերանախագծումներ և վերասարքավորումներ:

Վարձակալի կողմից անշարժ գույքի նախնական տեսքը խեղաթյուրող ինքնակամ վերակառուցումներ, պատերի, միջնապատերի կամ ծածկերի ամբողջականության խախտում, ցանցերի վերափոխում կամ անցկացում հայտնաբերելու դեպքում դրանք պետք է վերացվեն, իսկ տարածքը բերվի իր նախկին տեսքին՝ Վարձակալի հաշվին և Վարձատուի որոշած ժամկետում:

2.2.5. վարձակալված անշարժ գույքի տարածքներում պահպանել սանիտարահալահամաճարակային կայանների, պետիրշեզվերահսկողության մարմինների պահանջները, ինչպես նաև բոլոր այն կանոնները և նորմերը, որոնք գործում են Վարձակալի գործունեության ձևերի ու վարձակալված անշարժ գույքի նկատմամբ:

2.2.6. անշարժ գույքը և դրան հարող տարածքը պահպանել պատշաճ սանիտարական վիճակում:

2.2.7. Վարձատուին անմիջապես տեղեկացնել անշարժ գույքի ամեն մի վնասվածքի, վթարի կամ այլ իրադարձության մասին, որը վնաս է հասցրել (կամ սպառնում է հասցնել) անշարժ գույքին և ժամանակին ձեռնարկել բոլոր հնարավոր միջոցները վտանգի կանխարգելման համար, ինչպես նաև անշարժ գույքը հետագայում քանդելու կամ վնասելու դեմ:

2.2.8. առանց Վարձատուի գրավոր համաձայնության չկնքել գրավի, ենթավարձակալության պայմանագրեր և չմտնել գործարքների մեջ (իրավաբանական անձի կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի մեջ անշարժ գույքի կամ դրա մի մասի վարձակալության իրավունքի ներդրում):

2.3. Վարձակալն իրավունք ունի՝

2.3.1. վարձակալության պայմանագրի ժամկետի ավարտման կամ պայմանագիրը վաղաժամկետ լուծվելու դեպքում հանել/ վերցնել/ իր կողմից տարածքի վրա կատարած բաժանելի բարելավումները և տարածքը վարձատուին վերադարձնել այն վիճակով, ինչ վիճակով ընդունել է, եթե կողմերի միջև չկա այլ պայմանավորվածություն:

2.4. Վարձատուն իրավունք ունի՝

2.4.1. ստանալ վարձավճար սույն պայմանագրով սահմանված չափով և պայմաններով:

2.4.2. պահանջել Վարձակալից՝ անշարժ գույքը օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան:

2.4.3. Վարձատուն երաշխավորում է, որ նա ամբողջությամբ և միանշանակ օգտվում է տարածքի սեփականության իրավունքից և որ, նա կարող են օրինական կերպով տալ տարածքը վարձակալության և վարձակալին տրամադրել այլ իրավունքները, որոնք նախատեսված են սույն վարձակալության պայմանագրով:

Վարձատուն երաշխավորում է նաև, որ վարձակալության տրամադրման պահին սույն պայմանագրով վարձակալության տրված տարածքը գրավ չի դրված, չի դրված որևէ այլ ձեռնարկության

հիմնադիր ֆոնդում կամ այն ամբողջության կամ նրա մի մասի տնօրինման, տիրապետման և օգտագործման նկատմամբ դատական կամ այլ սահմանափակումներ չեն սահմանված:

Վարձատուին երաշխավորում է, որ նա համապատասխան ձևով ստացել է բոլոր թույլտվությունները և կամ համաձայնությունները /եթե այդպիսիք պահանջվում են/ կապված տվյալ գույքի վարձակալության հետ ցանկացած պետական կամ այլ մարմիններից:

Վարձակալը պարտավորվում է անմիջապես տվյալ վարձակալության պայմանագրի ստորագրելուց հետո բոլոր ջանքերը գործադրել, որպեսզի կատարի բոլոր պահանջները, կապված տվյալ վարձակալության պայմանագրի գրանցման հետ և ներկայացնել անհրաժեշտ տեղեկագրերը կիրառվող օրենսդրությանը հետևելու և տվյալ վարձակալությամբ նախատեսված իրավունքների ձևակերպելու համար:

3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ

3.1. Պայմանագրի կնքման պահին անշարժ գույքի համար ամսական վարձավճարը սահմանվում է յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 500 /հինգ հարյուր/ Հայաստանի Հանրապետության դրամ, ընդհանուր 45,6 քմ (քառասունհինգ ամբողջ վեց տասնորդական) համար՝ 22 800/քսաներկու հազար ութ հարյուր/ ՀՀ դրամ:

3.2. Վարձակալը Վարձատուի 900325151117 հաշվին փոխանցում է վարձավճարը պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից յուրաքանչյուր ամսվա համար միանվագ մինչև տվյալ ամսվա 30-ը, որի վերաբերյալ կողմերի միջև եռօրյա ժամկետում կազմվում է վճարման պարտավորությունների կատարման վերաբերյալ արձանագրություն:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Վարձակալության պայմանագիրը կնքված է համարվում պայմանագրի նոտարական վավերացման, պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից և գործում է 2 /երկու/ տարի ժամկետով՝ սկսած 25/11/2021թ. /երկու հազար քսանմեկ թվականի նոյեմբերի քսանհինգից/ մինչև 25/11/2023թ. /երկու հազար քսաներեք թվականի նոյեմբերի քսանհինգը/:

4.2. Սույն պայմանագիրը կարող է երկարաձգվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

4.3. Սույն պայմանագրի գործողության ժամկետի ավարտով կողմերի պարտավորությունները դադարում են, եթե մինչև ժամկետի ավարտը պայմանագրի ժամկետը փոխադարձ համաձայնությամբ չի երկարաձգվում:

5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՐՁԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

5. Սույն պայմանագիրը կարող է ժամկետից շուտ/ վաղաժամկետ/ լուծվել՝

5.1. կողմերի համաձայնությամբ, որի ժամանակ գույքային վեճերը լուծվում են կողմերի պայմանավորվածությամբ և երկու կողմերի կողմից /մեկ/ ամիս առաջ միմյանց գրավոր նախագգուշացնելով:

5.2. Վարձատուի պահանջով՝ վարձակալության պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե Վարձակալը՝
ա) անշարժ գույքն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով.

բ) էականորեն վատթարացրել է անշարժ գույքի վիճակը.

գ) եթե վարձակալը երեք /3/ ամիս չի վճարում վարձակալական վճարը՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ օրենքով սահմանված կարգով և չափով:

5.3. Վարձակալի պահանջով՝ սույն պայմանագիրը կարող է դատարանով վաղաժամկետ լուծվել, եթե՝

ա) Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել անշարժ գույքը կամ խոչընդոտներ է ստեղծել անշարժ գույքը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

բ) եթե վարձատուն պարբերաբար խախտում է սույն պայմանագրով իր վրա դրված պարտավորությունները.

գ) հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, անշարժ գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

5.4. Եթե վարձակալը պարբերաբար վատթարացնում է տարածքի վիճակը:



5.5. Վարձատուի պահանջով այլ հիմքերով՝ դրա մասին մեկ ամիս առաջ գրավոր ծանուցելով վարձատուին:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՄԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Վարձակալը պայմանագրի 3.1. կետում նախատեսված վարձավճարի կետանցի դեպքում յուրաքանչյուր օրվա համար Վարձատուին վճարում է տույժ՝ ամսական վարձավճարի 0.15 (զրո ամբողջ տասնհինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.2. Տույժի վճարումը կողմերին չի ազատում պայմանագրով նրանց վրա դրված պարտավորությունները կատարելուց:

6.3. Եթե Վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել անշարժ գույքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ, ապա Վարձատուն իրավունք ունի վարձավճար պահանջել կետանցի ամբողջ ժամանակահատվածի համար: Եթե նման վճարն ամբողջովին չի մարում Վարձատուին պատճառված վնասները, նա կարող է պահանջել հատուցելու դրանց մնացած մասը:

6.4. Վարձատուն պատասխանատվություն չի կրում անշարժ գույքի այն թերությունների համար, որոնք նա նշել է սույն պայմանագիրը կնքելիս, կամ նախապես հայտնի է եղել Վարձակալին:

7. ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄՆԵՐԸ

7.1. Վարձակալած անշարժ գույքի Վարձակալի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:

7.2. Վարձակալի կողմից կատարած վարձակալած անշարժ գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում:

8. ՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից:

8.2. Պայմանագրի գործողությունը կարող է դադարել կողմերի համաձայնությամբ՝ ցանկացած այլ ժամկետում:

8.3. Սույն պայմանագրի 4.3 կետով սահմանված դեպքերում պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց հետո պայմանագրի հիման վրա ձեռք բերված իրավունքի պետական գրանցումը՝ ուժը կորցրած է ճանաչվում պայմանագրի կողմերից որևէ մեկի դիմումի հիման վրա:

8.4. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում և ձևակերպում լրացուցիչ համաձայնագրերով:

8.5. Կողմերի անվանման, գտնվելու վայրի, բանկային վավերապայմանների փոփոխման կամ վերակազմավորման դեպքում նրանք պարտավոր են երկշաբաթյա ժամկետում միմյանց գրավոր տեղեկացնել տեղի ունեցած փոփոխությունների մասին:

9. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

10. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

10.1. Սույն պայմանագրից ծագող վեճերը լուծվում են փոխադարձ համաձայնությամբ՝ պայմանագրով: Իսկ համաձայնություն չկայանալու դեպքում օրենքով կամ սահմանված կարգով:

10.2. Սույն վարձակալության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման և պետական գրանցման օրենքով սահմանված կարգով 30 աշխատանքային օրվա ընթացքում և ուժի մեջ է մտնում այդ պահից:

10.3. Սույն համաձայնագրի հաստատման հետ կապված ծախսերը կատարում է Վարձակալը:

10.4. Սույն պայմանագիրը կնքված է հայերենով, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող 4 /չորս/ օրինակից՝ որոնցից մեկը մնում է նոտարական գրասենյակում, մեկը տրվում է Վարձատուին, իսկ մնացած երկուսը տրվում են Վարձակալին:

11. ԿՈՂՄԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՎԱՐՉԱՏՈՒ

Էջմիածնի քաղաքային համայնքը, հասցեն՝ ք. Էջմիածին Մ. Մաշտոցի 0, ի դեմս համայնքի ղեկավար Դիանա Մնացականի Գասպարյանի, հասցե՝ քաղաք Էջմիածին, Կամո 35, անձնագիր BA1938367 տրված 13.05.2015թ. 001-ից, որը գործում է համաձայն Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի, մի կողմից, որի անունից համաձայն 09.11.2021թ.-ին տրված թիվ 5237 լիազորագրի հանդես է գալիս Էջմիածնի համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար ԱՐԵՎԻԿ ԱՐԱՄԻ ԱԶԱՍՈՂԼՅԱՆԸ, ծնված՝ 26/10/1986թ.-ին, ՀՕՀ՝ 7610860581, անձնագիր՝ 005711197, տրված՝ 057-ի կողմից, 09/11/2017թ.-ին, հաշվառված՝ ԱՐՄԱՎԻՐ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՉԱՐԵՆՑԻ Փ., 376 Տ,

 Արամ Ավակյան

ՎԱՐՉԱԿԱԼ

Հայաստանի Հանրապետությունը, ի դեմս "ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ" պետական մարմնի, հասցե՝ Հայաստան, ԵՐԵՎԱՆ, ԿԵՆՏՐՈՆ, Վ.ՍԱՐԳՍՅԱՆ Փ. 3/8, 0010, գրանցման համար՝ 286.184.1045366, ՀՎՀՀ՝ 02506264, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղարի պարտականությունների ժամանակավոր պաշտոնակատար՝ ԶԱՌԱ ՌԱՖԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ, ծնված՝ 28/10/1970թ.-ին, ՀՕՀ՝ 7810700162, նույնականացման քարտ՝ 008418675, տրված՝ 004-ի կողմից, 24/06/2016թ.-ին, հաշվառված՝ ԵՐԵՎԱՆ, ԱՐԱԲԿԻՐ, ՍՈՍԵԻ Փ., 2/2 Շ, 8ԲՆ, որի անունից համաձայն 17/11/2021թ. /երկու հազար քսանմեկ թվականի նոյեմբերի տասնյոթին/ տրված թիվ Ե-238 լիազորագրի հանդես է գալիս ՀՀ Արդարադատության նախարարության պրոբացիայի ծառայության Արմավիրի մարզային մարմնի պետ՝ ԿԱՐԵՆ ՀԱԿՈԲԻ ԹՈՐՈՍՅԱՆԸ, ծնված՝ 15/11/1986թ.-ին, ՀՕՀ՝ 2511860457, նույնականացման քարտ՝ 006109409, տրված՝ 057-ի կողմից, 05/11/2017թ.-ին, հաշվառված՝ ԱՐՄԱՎԻՐ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՎԱՂԱՐՇԱՊԱՏ, ՉԱՐԵՆՑԻ Փ., 15 Շ, 5ԲՆ,

 Կարեն Կարսեան



Հայաստանի Հանրապետության անունից
երկու հազար քսանմեկ թվականի նոյեմբերի քսանհինգ
Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ՀՀ «Արմավիրի մարզ» նոտարական տարածքի նոտար
Տարոն Վրեժի Գրիգորյանիս կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Պայմանագիրը ստորագրած
անձանց ինքնությունը, գործունակությունը, իրավաբանական անձանց իրավունակությունը,
ներկայացուցիչների լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ Հայաստանի
Հանրապետության Արմավիրի մարզի Վաղարշապատ /Էջմիածին/ քաղաքային
համայնքի իրավունքները ստուգված են:
ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 135 հոդվածի համաձայն՝ սույն պայմանագրից ծագող
իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի պետական միասնական կադաստր
վարող պետական կառավարման հանրապետական մարմնի համապատասխան
ստորաբաժանումում:

Գրանցված է գրանցամատյան թիվ՝ 6661

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ և ծառայության վճար տասնհինգ հազար
ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքների:

Նոտար

Եւ.

Տարոն Վրեժի Գրիգորյան




ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԻԾ

Մասշտաբ 1:200

① 4 հարկ 2-րդ մասնաշենք

H=3.1
h=2.9
D=0.6
d=0.2-0.6



2-pg. Sum. 4-10-14

